

ԲԺԻՇԿ ԱՍՈՐ ՍԵՐԱՍՏԱՅԻ

XIX դ. սկսած միջնադարի հայ բժշկագիտական մտքի արժեքները եղել և մնում են հայրենական և օտար բժշկապատմաբանների սեռում ուշադրության կենտրոնում։ Նրանց ուսումնասիրություններում հանգամանորեն արժեքավորված է հիմնականում XI—XV դդ. հայ բժշկագիտությունը։

Ցավոք, գիտնականների մանրակրկիտ քննության շրջանակից դուրս է մնացել հետագա՝ մասնավորապես XVI—XVII դդ., հայ բժիշկների գիտական ժառանգությունը։ Մինչդեռ դա արժանի է առավել խորը ուսումնասիրության հենց բնկուղ այն պատճառով, որ XVI—XVII դդ. հայ բժիշկները պահպանելով և ստեղծագործաբար յուրացնելով ու լրացնելով նախորդ դարերում ստեղծագործած մեր անվանի բժշկապետների հարուստ ժառանգությունը, այն փոխանցել են հետագա սերունդներին։ Այս առումով խիստ արժեքավոր է XVII դ. բժիշկ Ասար Սերապտացու բժշկագիտական վաստակը։

Ասարի մասին կենսագրական բիւ լույսընկեր են մեզ հասել։ Հայտնի չեն նրա ծննդյան և մահվան թվականները։ Ստույգ հայտնի է, որ Ասարը 1622 թվականին գրել է իր հիմնական բժշկագիտական գործը՝ «Գիրք բժշկական արհեստի» բժշկարանը։ Բացի այդ, նրա կյանքի մի փոքրիկ ժամանակահատվածի (1618—1622 թթ.) մասին տեղեկություններ ենք քաղում իր հեղինակած, ինչպես նաև ընդօրինակած մի քանի ժողովածուների հիշատակարաններից։ Ըստ այդ տեղեկությունների, 1618 թվականին Ասարը ապրել է Լվովում, որտեղ ընդօրինակել ու միաժամանակ խմբագրել է մի «Առականգիրք», որպես հիմնական աղբյուր օգտագործելով Մխիթար Գոշի «Առականգիրքը»։

Հիմնական գործի՝ «Գիրք բժշկական արհեստի» ստեղծման թվականի մասին հիշատակություն կա բժշկարանի առաջաբանում. «Ով ընթերցողը և բանիրուն եղբայրը, յիշեցէք զհաւաքող բանից՝ զյոզնա-

մեղ Սեբաստացի Ասար ծառայս, և Աստուած ողորմի ասացէք, գրեցաւ ի թվին Հայոց ՌՀԱ (1622)»։*

Ավելի ստույգ ու արժեքավոր է Ասարի տոհմածառին վերաբերող տեղեկութիւնը, որ պարունակում է Լեւոնի Բրիտանական թանգարանի № 3712 ձեռագիրը, ըստ որի այդ տոհմը նախնիքը մի քանի սերունդ շարունակ տվել է բաւական ճանաչված և հմուտ բժիշկներ՝ ամենայն հավանականութեամբ վերաբույժներ։ Այդ բժշկարանի հիշատակարանում, մասնավորապես, գրված է. «Յիշեսցիք առ տէր յարժանաւոր աղօթս ձեր՝ դամենանուառ ծառայքս՝ (վերաբույժ) ձերում աղնուականութեան, ղնախնի բժիշկըն մեր, սեբաստացի խօճայ Պարխուտարն, և որդի նորա ճեռահ Ասարն և որդի նորա բժիշկ Պետրոսն։ Եւ յիշեսցիք զԳրիգորն, և Ասար աղան և թոռունք նոցա սարկաւադ բժիշկ Միքայէլս, և եղբայր նորա խօճայ Գէորգն, և որդի նորա տիրացու Մանուկն, որք և յիշեալք լիջիք առաջի տէրն մերոյ Յիսուսի Քրիստոսի» [2, էջ 314]։ Բնական է, որ բժշկական առաջին մկրտութիւնը նա ստացել է հորից, բացի այդ, լինելով պերիողետ բժիշկ նա եղել է Իսպահանում, Լիովում, Սեբաստիայի տարբեր գավառներում, շրջել է երկրից երկիր և շփվելով հմուտ բժիշկների հետ, կատարելագործել ու հարստացրել է իր բժշկական գիտելիքները։

Ասար Սեբաստացու թողած գիտական ժառանգութեան բարձր մակարդակը, ինչպես նաև կողմնակի հեղինակների կարծիքները նրա մասին («առաւմնասեր անձ, իբրև ճշմարիտ գրոց աշակերտ, յոյժ ներհմտութեամբ պարապեալ ընդ արտաքին գրեանս»), առիթ են տալիս կարծելու, որ նա եղել է բաւական զարգացած և հարուստ գիտելիքների տեր անձնավորութիւն։ Մի քանի լեզուներով՝ հունարենի, պարսկերենի, թուրքերենի և հատկապես արաբերենի նրա իմացութիւնը թույլ է տվել լրիւ տեղյակ լինել միջնադարի բժշկական գիտութեան ձեռքբերումներին։

* «Գիրք բժշկական արհեստի» գործի մեղ հայտնի ձեռագիր օրինակներից բժշկարանի ստեղծման թվականի (1622) մասին նշվում է նաև Ֆրանսահայ բժիշկ-բանասեր Կ. Բաժաւջանի անձնական սեփականութիւնը հանդիսացող օրինակի մեջ։ Բժշկարանի ստեղծման թվականի ստուգութիւնը կասկած հարուցել չի կարող չնայած և. Հովհաննիսյանը գտնում է, որ բժշկարանը գրվել է 1614 թվականին։ Հավանաբար նրա համար հիմք է ծառայել սեբաստահայ բանասեր Կ. Գաբրիկյանի տեղեկութիւնը, ըստ որի իր անձնական սեփականութիւնը հանդիսացող հավաքածուի մեջ կա Ասար Սեբաստացու մի բժշկարան, գրված 1614 թվականին։ Այնինչ, Կ. Բորգոմյանը, ստանաւորելով այդ բժշկարանը, եկել է այն ճշմարիտ համոզման, որ վերահիշյալ գործը ոչ թե «Գիրք բժշկական արհեստի» ստեղծագործութիւնն է, այլ Ասարի գրչին պատկանող մի նոր գործ, որը հիմնականում կոմպիլյացիա է մինչև XVI դ. ստեղծագործած բժիշկների աշխատանքներից [1, էջ 283]։

յին և օգտվել ինչպես անտիկ, այնպես էլ միջնադարյան խոշոր մտածողների գործերի բնագրերից։

Ասար Սերաստացու հետաքրքրությունները չեն սահմանափակվել միայն բժշկության բնագաղափարով։ Նա եղել է նույնքան հմուտ բանասեր, հեղինակն է նաև տոմարական-աստղաբաշխական բնույթի երկու գործի։ Ի մի բերելով Ասար Սերաստացու մեզ հասած մատենադիտական ժառանգությունը, կարող ենք տալ նրա բազմաբնույթ ստեղծագործության հետևյալ նկարագիրը։

1. Բժշկարան՝ «Գիրք բժշկական արհեստի»։

2. XII դ. ասորի բժիշկ Արուսայիդի «Յաղագս կազմութեան մարդոյն և զոյացութեան անդամոց մարմնույ» գործի խմբագրումը։

3. Բանասիրական բնույթի գործեր՝ «Առակադիրք» և գրիչ մի բանի ժողովածուները։

4. Տոմարական-աստղաբաշխական բնույթի երկու գործ՝ «Տոմար Արեղական և Լուսնի» և «Պարզատումար Զատիկ Ֆրանկաց»։ Բացի այդ, հիմք ընդունելով Վ. Թորոմյանի հեղինակավոր կարծիքն այն մասին, որ Ասարը 1614 թ. գրել է մի բժշկարան ևս, պետք է ենթադրել, որ նա ոչ թե մեկ, այլ երկու բժշկագիտական երկերի հեղինակ է։ Ձեռքի տակ չունենալով վերոհիշյալ բժշկարանը, մենք առաջիմ արձանագրում ենք միայն նրա գոյության փաստը։ Ասար Սերաստացու մեզ հասած ստեղծագործությունների մեջ առավել արժեքավորը խնդրո առարկա «Գիրք բժշկական արհեստի» գործն է։ Մեզ հայտնի են այդ արժեքավոր բժշկարանի մոտ տասը ընդօրինակություններ, որոնցից չորսը պահվում են Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում (413, 464, 7749, 9837), մնացածները գտնվում են Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան Միաբանությունների մատենադարանում (1399 և 2817, 658), Սերաստիայի ս. Նշան վանքի մատենադարանում (213, 214), Փարիզի ազգային գրադարանում և այլն։

«Գիրք բժշկական արհեստի» ստեղծագործության մեր ձեռքի տակ գտնվող ընդօրինակություններից և ոչ մեկն էլ լիարժեք չէ, բոլորն էլ ունեն պակաս հատվածներ։ Մեր ուսումնասիրության նյութ հանդիսացող Մաշտոցի Մատենադարանի 4 ձեռագիր ընդօրինակություններից միայն մեկում է առկա բժշկարանի առաջին բաղկացուցիչ մասը՝ «Դուռն, որ ցուցանէ զպատճառներն, որ են սալապալթներն» վերնագրով, իսկ մյուս ընդօրինակություններում առկա է միայն բուն բժշկարանը։

«Գիրք բժշկական արհեստի» գործը միջնադարյան հայ բժշկագիտության մի արժեքավոր ստեղծագործություն է, որտեղ հեղինակը խոսում է ամենատարբեր հարցերի մասին։ Այն չի ամփոփում բժշկու-

թյան մի առանձին դիֆերենցված բնագավառ, այլ միջնադարի բազմա-
թիվ բժշկարանների նմանօրինակությամբ հեղինակը միաժամանակ
անդրադառնում է և մարդկազմության, և ներքին ախտաբանության ու
թերապիայի հարցերին: Հեղինակն, ուղեցույց է ունեցել բժշկագիտու-
թյան խոշոր մտածողներ Հիպոկրատի, Գալենի, Նեմեսիոս Եմեսացու,
Իբն-Սինայի, Ար-Ռազիի գործերը, որոնց անունները հաճախ են հի-
շատակված բժշկարանում: Եվ այսուհանդերձ Ասարի համար որոշիչ են
եղել մինչև XVI դ. ստեղծագործ հայ բժիշկների գործերը, մասնա-
վորապես Մխիթար Հերացու, «Ջերմանց մխիթարութիւնը» հավանա-
բար նաև նույն հեղինակի ներքին ախտաբանությանը վերաբերող մեզ
չհասած այլ գործեր (որից բարեբախտաբար, առանձին հատվածներ
են պահպանվել «Գիրք բժշկական արհեստի» գործում [3, էջ 103—109])
և իհարկե XV դարի խոշոր բժշկապետ Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ
բժշկութեան» և «Անդիտաց անպէտ» մեծածավալ երկասիրությունները:

Այսպիսով, «Գիրք բժշկական արհեստի» գործը կազմված է երկու
մասից. 1. «Դուռն, որ ցուցանէ զպատճառներն, որ են սապապաթներն»
և 2. «Գիրք բժշկական արհեստի»: Առաջին մասը նվիրված է հիվան-
դությունների էթիոլոգիային՝ պատճառագիտությանը: Իհարկե, ինչպես
պետք էր սպասել, հիվանդությունների պատճառագիտության հիմքում
Ասարը դնում է ողջ միջնադարում գերիշխող հեղա-հյուսթիան ախտա-
բանության (հումորալ պաթոլոգիա) ուսմունքը, ըստ որի հիվանդու-
թյունները ծագում են օրգանիզմի 4 հեղուկների հավասարակշռված վի-
ճակի ֆունկցիոնալ խախտումների դեպքում, իսկ բժշկության նպա-
տակն է կարողանալ հավասարակշռված պահել մարմնում այդ 4 տար-
րերի խառնվածքը. «յամեն ժամ խառնուածք մարմնոյն հաւասար մնան
և շաւիւնան մէկ քան զմէկ և ոչ պակասին, քանդի ասացեալ են իմաս-
տունքն թէ բնութիւն կենդանութեան որպէս զհող է և թէ դինքն գործես
և վաստակես շէն մնայ, ապա թէ ոչ խոպանանայ և աւերի» [4, էջ 36բ]:
Եվ սակայն, հումորալ պաթոլոգիայի թեզը որպես հիմք ընդունելով
հանդերձ Ասար Սեբաստացին օրգանիզմի ախտահարման տարբեր
հարցեր պատճառաբանում է հիվանդին շրջապատող ռեալ պայմանների
միջավայրով: Ամեն մի հիվանդագին վիճակ ունի իր նյութական հիմքը՝
պատճառը. ահա Ասարի այն ռացիոնալ եզրահանգումը, որ ընկած է
նրա հիվանդությունների պատճառագիտության հիմքում: «Եւ պատճառն
այն բանն է, երբ իրք մն որ դեռ չէ եղել, նա յառաջն պատճառն լինի
և ապա իրք մն երևնա:... Եւ յիմացիր, որ ամեն իրք (հիվանդութիւն)
պատճառով լինի և առանց պատճառի իրք չկայ» [5, էջ 81բ]:

Բժշկարանի առաջին մասում ուշադրության է արժանի այն հատ-
վածքը, որտեղ հեղինակը դատողություններ է անում ռսկրային և հողա-

յին տարրերը բնույթի ախտահարումների պատճառագիտության մասին Այստեղ Ասարը թվարկում է մոտ 10 ախտածին ազդակներ, բավական լուրջ բացատրություններ տալով հատկապես բնածին և ձեռքբերովի ոսկրային արտաներին: Այդ մասին գրում է. «ա. այն է, որ սեղմին ումն փոխուել է՝ որ զօգուած լինելոց է և կերպարան լինելոց է վատով լինի և դիր գործն, որ գործելու է ի բման չկարէ գործել իր վատութիւնն պատճառին համար Բ. [2] այն է, որ ի ծննդեան ժամն պատճառան լինի, որ զօգուածն աւիրի Գ. [3] այն է, որ ի սննդեան ժամանակն զաղաչն ի լուանալն և ի կապելն և ի վերցնելն և ի դնելն իր վնաս մն հասցնեն: Եւ այս վնասն կամ ի մօրէն լինի և կամ ի գահելէն լինի Կ. այն է, որ կամ բնկնի կամ զախմն դիպի տղին: և. այն է, որ ազգի հիւանդութիւնք և ցուելք բնծայի, որպես Թաշանուճ և Թամատուտ և լակուտ և զոգութիւն և բսաբըրխայ և սիլ Կ. դիրութիւն: Ե. խիստ նիհարութիւն: Բ. ուռեցնին: Թ. խոցերն: Ժ. այն է, որ զօգվածքնոցն դրուածքն ի տեղն չըլինի» [5, էջ 83բ—84ա]:

Ինչպես երևում է, փորձառու բժիշկը կարողացել է ճիշտ բնկալել ոսկրահոգային համակարգի պաթոլոգիական փոփոխություններ առաջացնող բոլոր հիմնական պատճառները (նախկինում տարած որևէ հիվանդություն, արտաքին գործոններ, այլ օրգանի հիվանդություն)՝ հիմնական շեշտը դնելով ներվային համակարգի վրա, որպես ախտածին ազդակի: Հետաքրքիր է, որ ոսկրային համակարգի բնածին արատները Ասարը բացատրում է սեռական բջիջների «վատութիւնն» պատճառով, համաձայնարար նկատի ունենալով սեռական օրգանների այնպիսի հիվանդություններ, որոնք ազդելով արական սեռական բջիջների վրա, ժառանգականորեն հիվանդածին ներգործություն են ունենում սերնդի վրա:

Ուշագրավ են Ասարի կողմից տրված բացատրությունները հոդախախտների պատճառագիտության վերաբերյալ: Նա շատ որոշակիորեն նշում է երկու հիմնական գործոն՝ 1. արտաքին («ի դրսէ») տրավմատիկ ֆակտորը և 2. ներքին («ի ներքէ») կապված՝ օրգանիզմի այնպիսի ախտահարումների հետ, որոնք պաթոլոգիական փոփոխություններ են առաջացնում հոգեբում, մկաններում և հոդակապերում: Ահա թե ինչպես է ձևակերպված այս միտքը նրա կողմից. «զօգուածին մէկ մէկէ բաժնիլն և կցիլն և ինքս Բ. ցեղ է: Մինն այն է, որ ի դուրսէ վնաս հասնի զօգվածին որպէս կոտրիլն և զարկուածն և ճգրիլն և կտրելն: Եւ Բ. այն է, որ ի ներքսէ վնաս լինի, որ շղերն քաշվի և մկուներն» [5, էջ 85բ]: Ներքին պատճառների հիմքում իհարկե համորալ պաթոլոգիան է, երբ հեղուկների խախտված հավասարա-

կշռութեան պայմաններում նրանցից որեւէ մեկը կուտակւում է զոգ-
ւածքներում՝ առաջացնելով ոսկրերի փոփոխութեաններ (երկարացում
կամ կարճացում, փափկացում ու կարծրացում) և դրա հետ կապված
տեղաշարժեր հողերում, ինչպես նաև հողի տնկացում:

Անկրահողային համակարգի ախտահարումների էթիո-պաթոգեննեզի
մասին խոսելիս Ասար Սեբաստացին ուշագրավ դատողութեաններ է
անում ոսկրերում զարգացող ուռուցքների ախտածնութեան մասին:
Նախկինում տարած որոշ հիվանդութեաններ կարող են ոսկրային նո-
րագոյացութեանների պատճառ դառնալ և ոսկրային հյուսվածքը, նման
օրգանիզմի մյուս հյուսվածքներին, նույնպես ենթակա է ուռուցքային
պաթոլոգիային: Ասարն այստեղ Միխիթար Հերացու զարգացրած «բոր-
բոսային» տեսութեան գաղափարը կիրառում է ուռուցքների ախտա-
ծագման մեջ*: Ասարն այսպես է բացատրում ոսկրային հյուսվածք-
ներում տեղի ունեցող նմանօրինակ փոփոխութեանը. «...Ժ. պատ-
ճառն այն է, որ զօդուածք մի կտորել լինի և ցաւ ընծայի և այն ցաւուն
պատճառովն ուռէց լինի և ոմանք կու կարծեն թէ ոսկրն զուռէցն չի ըն-
դունել և ըստույգ խօսքն այն է, որ ամէն ոսկրն ի զուռէցն կու ընդու-
նի այն պատճառին համար, որ ալեային ոսկրն և այլն բուսնիլ և մեծ-
նալ ունի և բորբոսիլ այլ ունի: Ապա և այս կերպովս զուռէցն կու ըն-
դունի» [5, էջ 86]:

Անշուշտ Ասար Սեբաստացու համար մինչև վերջ ընդունելի է եղել
Հերացու «բորբոսային» տեսութեանը, որովհետև ջերմերի ախտածագ-
ման պատճառները քննելիս նա նորից անդրադարձել է այդ գաղափա-
րին. «Բորբոսն, որ տաքութեամբ յաւելնայ և օտար տաքութենով տաք-
նա՝ աչս չէ ըստույգ տաքութիւնն և այն տաքութիւնն որ չէ բնութեամբ
և դիւռութեամբ: ...Եւ (այս) տաքութիւն մնայ և զանձն տաքցնէ և փոխէ
ի բնութենէ» [5, էջ 89]:

«Գուռն, որ ցուցանէ զպատճառներն, որ են սապապաթներն» բաժ-
նում Ասարը խոսում է նաև հանկարծամահութեան պատճառների մա-
սին՝ մի դեպքում կապված սրտի «լիարյունութեան» հետ (երբ սրտի
փորոքները միանգամից լցվում են մեծ քանակութեամբ արյունով՝
առաջացնելով սրտի ուժեղ կծկում ու աշխատանքի կանգ), մյուս դեպ-
քում ուղեղի կաթվածի («սաքթայի») հետ: Ավելին, Ասարը կարողացել
է տարբերակել սրտի հետ կապված հանկարծամահութեանը ուղեղի

* Ինչպես հայտնի է Մ. Հերացին մարմնի տարբեր օրգաններում ուռուցքների գոյա-
նալը բացատրում է նաև չորս հիմնական հեղուկներից որեւէ մեկի բորբոսելով. «... Ապա
թէ ի բաժին մի ի մարմնոյ բորբոսի, որ է ի յանգամ մին, նա այրնէ զայն ցաւն, որ
անուանի սարթան, հոռոմն կարկինոս առէ, որ է խեցգետին» [6, էջ 113]:

կաթվածից առաջացած հանկարծամահությունից, Զուրկ լինելով դիա-
հերձման հնարավորությունից, XVII դարի սերաստահայ բժիշկը այդ-
պիսի եզրակացության հանդիս համար հմուտ դիտողականության
հետ մեկտեղ անպայման պետք է ունենար նաև տեսական հարուստ
գիտելիքներ, իրոք՝ տարրեր պարագաներում Ասարը հաճախ է վկա-
յակուում բժշկության գասականների աված բացատրությունները՝ նա
գրում է. «Ասե՛ Բաղարատ չի՛ր ֆուսուլն թէ մարդն, որ առողջ և ի լի
մարմին լինի և դէր լինի, այն մարդոցն շատ աշխատիլն վնաս է՝ այնոր
համար, որ խառնուածքն կու տաքցնէ և կու շարժէ և դերկնին կու լնու
և դարտին փոքորն այլ կու լնու և մաֆաճա կու բերէ...» Բիշ անց վկա-
յակուում է Կոստա բեն Լուկիային. «Ասցել է Կոստա Լուկիային սրգին,
թէ ես մարդ տեսա որ բարկացաւ և շուտ մն ի վեր վաղեց, դմուճկին
մէկն հաղաւ և մինչև որ գմեկ այլն հագնելու եղաւ ի վաշք անկաւ և
մեռաւ»* [5, էջ 94ա]։

Շարունակելով տարրեր հիվանդությունների պատճառագիտության
հարցերի բնույթը Ասար Սերաստացին կանգ է առնում ժառանգաբար
փոխանցվող մի բանի հիվանդությունների վրա. «Եւթն ցեղ ցաւ են, որ
զտաւին ի ծնողացն առնու և գայ յառաջ. զոգուծին, պիտակն—բեր-
նին հոտն, մայնիայն, հալէմաշն, ծաղիկն, աշացան նկրիսն»։ Իսկ ան-
բուժելի հիվանդությունների շարքում դասում է ուռուցքները, խոցային
հիվանդությունը և պաղաղքան, որոնց բուժումը բժշկագիտության հա-
մար այսօր էլ դժվարին խնդիր է։

Ասարը խոսում է նաև բնական մահվան մասին, այն բացատրելով
օրգանիզմի կենսական ուժերի սպառումով, համեմատելով մարդը ճրա-
դի լուսի հետ. «Եւ այս պակասիլն և հատանիլն անճարակ է և պիտի
որ լինի։ Եւ այնպես հատնի այդ տաքութիւնդ, որպէս որ ճրագին եղն
հատնի, ճրագին նայ լուսն կու վատուծի։ Սոյնպէս լինի և մարդն. յոր-
ժամ պակսի բնութիւնին և այնոր համար, որ դրնական տաքութիւնն
ժամանակաւ մարել է, որպէս զճրագի եղ վառելով հատել է և պակա-
սել է։ Եւ զայսմն պակասութիւնս կերակուր ուտելով մարդ ի տեղն չկա-

* Ասարը իր բժշկագիտական հայացքներով հարադատ մնալով հիպոկրատյան
ավանդույթներին, շատ հաճախ բուռացի բանաբաղություններ ու մեջբերումներ է կա-
տարել այսպես կոչված հիպոկրատյան բժշկաբաններից՝ դրանք գիտելով որպես հա-
վաստի և հեղինակավոր աղբյուրներ։ Հավանական է Ասարը ծանոթ էր Fessalis legati-
onem աշխատությանը, որն ըստ Յոնգիի մտնում է «Հիպոկրատյան հավաքածուի
մեջ»։ (Յոնգիի կողմից հրատարակած «Հիպոկրատյան հավաքածուն» ամենա-
լիարժեքն է հին հրատարակությունների մեջ, այն կաղնված է աշխարհի տարբեր գրա-
դարաններում գտնվող բազմաթիվ հունարեն ձեռագրերի հիման վրա [7, էջ 186—187]։

րէ բերել... Եւ այս մահուս բժշկապետքն քնութեան մահ ասին» [5, էջ 93ա]:

Ամփոփելով բժշկարանի տվյալ բաժնի վերաբերյալ ասվածը նըշենք, որ հիվանդութիւնների պատճառագիտութեան՝ Ասարի մեկնաբանումներում գնահատելին այն է, որ հիվանդութիւնների ախտաժազման մեջ նա որոշիչ տեղ է հատկացնում արտաքին միջավայրին, վեներապայմաններին, աշխատանքային գործոնին, ներվային հոգեկան տարբեր լարումներին (վախ, հուզումներ, ծանր հոգեկան ապրումներ), անհատական կենցաղային հիգիենայի խախտումներին և, վերջապես, նախկինում տարած հիվանդութիւններին:

Բուն բժշկարանը սկսվում է կարճ առաջաբանով, որին հաջորդում են ներքին ախտաբանութեանը վերաբերող 143 գլուխներ*: Առաջաբանում մասնավորապես ասվում է. «...Բնկ այժմ նուստտ հոգիս, ծառայ ծառայիցն Աստուծոյ անիմաստ Ասար Սերաստացիս, կամեցա զընտիրան հաւաքել և զհամառօտն, և բացայայտել ըստ կարեաց մերում փոքր ի շատէ ի բանից իմաստասիրաց և բժշկական վարդապետացն և խնամ տանել ցաւազնեալ անձանց. առ ի պէտս բժշկութեան» [5, էջ 53 բ]: Ըստ բժշկարանի վերջում եղած ցանկի, բժշկարանի նախնական օրինակում առաջաբանին հաջորդել է մի մեծ բաժին՝ նվիրված քնդհանուր բժշկութեան և մարդակազմութեան հարցերին*: Այդ ցանկը հետևյալն է. «Ա—յաղագս մարդոյն կազմութեան: Բ—վասն ստեղծման եօթն անդամոցն: Գ—Մասունք մարմնոյն: Դ—վասն կազմութեան մարդոյն մեծին: Ե—վասն վեց իրօք մարդ մեռանի մահապարտ է: Զ—կրատ զընտրիւնն առողջ պահելոյ: Է—ի—բաղանիս լուսյիլն է: Ը—Դուռն, որ յիշէ զչորս տէրէճքն: Թ—Դիտենալ զօգերն: Ժ—Պատճառ հիւանդութեանց շորս եղանակ է: ԺԱ—վասն երակի ճանաչելոյ: ԺԲ—Հասկանալ և ճանաչել զգոզն: ԺԳ—նշանք ձեռնալուային: ԺԴ—վասն պօհրանի: ԺԵ—վասն նշանաց հիվնդին: ԺԶ—վասն հիվնդին քրտնելուն:

* Քանի որ «Գիրք բժշկական արհեստի» գործի մեղ հասած ընդօրինակութիւններն ունեն պակաս հատվածներ, այդ պատճառով տարբեր կարծիքներ կան բժշկարանի գլուխների քանակի մասին: Կ. Բասմաջյանը գրում է, որ այն բաղկացած է 135 գլխից, իսկ Վ. Քորդոմյանն այն կարծիքին է, որ «Գիրք բժշկական արհեստի» գործը կազմված է 143 գլխից: Քանի որ մեր ձեռքի տակ գտնվող 4 ձեռագիր ընդօրինակութիւններից ամբողջական է Մատենադարանի № 413 բժշկարանը, հետևապես մեր ուսումնասիրության համար հիմք ենք ընդունել այդ օրինակը, որն էլ բաղկացած է 143 գլխից:

** Մեր ձեռքի տակ եղած ձեռագիր օրինակներում այդ ցուցակը բացակայում է, առկայն առկա է Վիեննայի մխիթարյան մատենադարանի № 287 ձեռագիր-բժշկարանի վերջին 100 ա էջի վրա՝ «Յաղագս մարդոյն կազմութեան» վերնագրով, որին հաջորդում է բուն բժշկարանի գլխացանկը և ավարտվում է այսպէս. «Գրեցաւ մարդկազմութիւն և բժշկարան» [8, էջ 712]:

ժէ—Առաջադիտութիւն Հիմնդութեանց: ԺԲ—Նշանք Կնգու: ԺԳ—Խօսք միահամուտ Ի—Վասն բաներու:

Որ Ասար Սերաստացին իրոր մի առանձին բաժին է նվիրել մարդակազմութեանը, այդ մասին վկայութիւն կա նաեւ մեր ձեռքի տակ գտնվող բժշկարանի առաջին մասում: Այսպէս՝ խոսելով մահւման տարբեր պատճառների մասին նա գրում է. «որպէս որ յիշած է ի մարդկազմութիւնն» «եւ յառաջ ի մարդակազմութիւնն յիշած է, թէ բան գտնէն եղանակ մանկութեան եղանակն մուշթատիլ է» [5, էջ 93ա] (Ի դեպ, որ Ասարը իր բժշկարանում կարող էր անդրադառնալ մարդակազմութեանը և որ բաշատեղյակ էր իր ժամանակի անատոմիական գիտութեանը, դրա ապացույցն է XII դ. ասորի բժիշկ Աբուսայիդի «Մարդակազմութեան» Ասարի կողմից կատարած բարձրարժէք խմբագրումը):

Բժշկարանի առաջարանին հաջորդում է առաջին գլուխը, ուր հեղինակը շարադրում է իր մտորումները բժշկի մասնագիտութեան, նրան առաջադրվող պահանջների մասին: «Ապա՛յ պարտ է բժշկին, որ իմաստուն լինի և դիտուն, և յուլ և ծուլ չըլինի, և վարպետի աշակերտութիւն արել լինի, և ազէկ ուսել լինի, և շատ գրեանք լինի կարգացել և շատ բաներ լինի փորձեր և ի գործ ածել և ինքն ի յիւր մտացն ալ շատ բաներ հանճարելու կարող լինենայ» [4, էջ 34բ]: Բժշկի գիտակցութեան ու բարոյական պատասխանատվութեան մասին այդ խոսքերը հնչում են ինչպէս հիպոկրատեան երգում:

Բժշկարանը հիմնականում վերաբերում է կլինիկական բժշկութեանը՝ ներքին հիվանդութիւնների ախտորոշման, տպարինման և բուժման, հիվանդների խնամքի, դիետայի ու հիվանդութեան ելքի կանխագուշակման հարցերին: Բժշկարանում նկարագրված են առանձին նոզոլոգիական միավորները՝ հեղինակը համառոտ թվարկում է տվյալ հիվանդութեան բնորոշ ախտանիշները և ավելի հանգամանորեն ներկայացնում յուրաքանչյուր ախտահարման թերապիան: Ասարը մասնավոր պաթոլոգիան և թերապիան վերլուծում է ոչ թէ սիստեմավորված՝ առանձին օրգան-համակարգերի, այլ խառը, երբեմն էլ ինքնուրույն նոզոլոգիական միավորի փոխարեն ներկայացնում է առանձին ախտանշաններ, որոնք բնորոշ են մի շարք հիվանդութիւնների: Որպեսզի ավելի որոշակի ու ստույգ դառնան ամենատարբեր ախտահարումների վերաբերյալ հեղինակի տված մեկնաբանումները, մեր ուսումնասիրութեան մեջ նպատակահարմար դտանք բժշկարանում քրննարկված բոլոր հիվանդութիւնները խմբավորել ըստ օրգան-համակարգերի:

Սիրտ-անոթային և բոֆային համակարգի հիվանդություններ

Ամբողջ բժշկարանում սրտային ոչ մի ինքնուրույն հիվանդություն չի նկարագրված, դրա փոխարեն շատ հաճախ հանդիպում ենք սրտի աշխատանքի զանազան շեղումների հետ կապված ախտանիշների նկարագրություններ: Որպես առանձին հիվանդություն են ներկայացված նաև անոթների հիվանդությունները: Ինչ վերաբերում է վերին շնչական ուղիների ու թոքերի ախտահարումներին, ապա բացի ինքնուրույն հիվանդագին միավորներից («նուզլայ»-գրիպ, «վասն հագի»-բրոնխիտ և թոքաբորբ) հեղինակը շատ հաճախ խոսում է շնչուղիների պաթոլոգիայի առանձին խումբ ախտանիշների («տաքից և ցրտից», «չորությունից և խոնավությունից») ծագող տարբեր բնույթի հազերի, բարդությունների ու բուժման միջոցների մասին: Բժշկարանի 36-րդ գլխում ասված է. «Յորժամ մարդն շատ հազա և պալղամ չգայ ի վեր և տաքութիւն ունենա և ծարաւի և բնութիւն ամուր լինի, զայս դեղս տուր: Առ կեղևած նուշ և փարսի և շան և մարուխի տակ և քարօս ըղզիանի հոնտ և. ե. տրէմ աղայ և մաղէ կտաւատ դրջէ ջրով և զարկ որ փրփրի և այդ ջրովդ շաղվէ և տուր ամէն օր ֆնտրխի չաք և ի վրա տաք ջուր խմցոյ: Այլ մատուտակ եփէ և զջուրն խմցու ինքդ, հալի և թոքացաւի օգտէ: Կամ առ անտուղ և սևուկ հնդիկ և մեյրով շաղվէ և տուր որ ուտէ, լաւ է: Հապ հազի և տղայոց լավ է: Առ պիանպալի որ է ռուպիսուս և նշայ և քթիրայ ա. ա. տրէմ, աֆիոն կէս տրէմ, հապ զուգէ, մեծ մարդուն և. (5) հատ, տղայոց բ. գ. ըստ ուժոյն» [4, էջ 46բ]:

Ասար Սեբաստացին կարողացել է տարբերակել թոքային արյունահոսությունը բերանի խոռոչից եկող այլ բնույթի արյունահոսություններից: «Արեան, որ ընդ բերանն գայ» գլխում գրում է. «Եթէ փսխելով գայ այդ լերդեն է կամ ի ստամոքէն, և այն որ հաղալով գայ և փրփրային և գոյնն պայծառ լինի և ի բաց և կամ խարտէշ՝ այդ ի թոքէն՝ և թէ արիւնն թուխ լինի նա այն տեղացն գայ, որ ցանգ անուանի» [4, էջ 59բ]: Որպես բուժում Ասարն առաջարկում է լիակատար հանգիստ, համապատասխան դիետա և զեղորայքային բուժում. «Առ գիտոր և նռան ծաղիկ, հայ կաւ և քահրուպայ ա. ա. տրէմ, չոր վարդ գ. տրէմ, և կերատ մի աֆիոն և տուր ժ. տրէմ աղտորի ջրով, օգտէ Աստուծով: Եւ մոտ միայ այս պատճառացս օգտէ, որ հոռոմ ձիթով օգտէ, տրորես և տաս, բայց թէ տաքութիւն ունենայ յայնում չէ մարդու տալ» [4, էջ 51 ա]:

Որովայնի խոռոչի օրգանների հիվանդություններ

Այս բաժնում Ասարը հանգամանորեն կանգ է առնում մարսողական տրակտի ամենատարբեր ախտահարումների վրա: Բերանի խոռոչի

Հիվանդություններից նա անդրադառնում է stomatitis և gingivitis (իրենց բարդացած ձևերով) caries, աֆտա (նորածինների մոտ), ինչպես նաև SOOR ախտահարումներին: Բժշկարանի «Վասն, որ ի բերանն խաւարտ ելանէ» գլխում Ասարը նշում է բերանի լորձաթաղանթի բորբոքման կատարաւ («կարմիր») և դանդրենոզ («սև») ձևերի մասին: Կատարաւ ստոմատիտը Ասարի մոտ բնութագրւում է այտուցված, հիւղերեմիկ, ցալոտ, հաճախ արյունահոսող լորձաթաղանթով, որը ժամանակին չբուժուելու դեպքում վերափոխւում է դանդրենոզ ստոմատիտի: Այս դեպքում բերանի լորձաթաղանթի վրա առաջանում են տարբեր մեծութեան և խորութեան խոցային վերքեր, որոնք ալիւլի դժվար են ենթարկւում բուժման: Gingivitis -ի բուժման համար Ասարն առաջարկում է մի դեղախառնուրդ, որի բաղադրութեան մեջ մտնում են՝ նոսնկեղև, ալյած շիր, մաղտաբն, ժանկառ, իսկ ատամի caries-ի ժամանակ խորհուրդ է տալիս ալյած դարին խառնել աղով և քսել ատամին: «Սեք կտանի ու ցար կզաղարի»: Առաջին հայացքից պարզունակ թվացող այս բուժամիջոցները բոլոր Ասարի ունեն որոշակի բուժիչ ազդեցություն: Այդ է պատճառը, որ նա համոզված գրում է. «նա հիմնէ ողջացնէ» կամ «օգտէ և լաւացնէ»:

Բկանցբի և կոկորդի հիվանդություններից բժշկարանում հանդիպում ենք միայն դիֆթերիայի շատ համառոտ նկարագրութեանը: Թեև ամբողջ բժշկարանում սա միակ ախտահարումն է, որի բուժման համար հեղինակը չի առաջարկում ոչ մի դեղամիջոց. «Եւ յորժամ տեսանես, որ ի մարդոյ լեզուատակն բ. ելունդն ելանէ յիրար կից և իր նշանն այս է, որ դառաջին՝ խիստ ծարաւի և շատ ջուր ըմպէ և չըկըշտանայ և ոչ ջերմութիւն չիջանի, գիտենայ՝ դի ե. օր ապրի և մեռանի» (4, էջ 48ա):

Բժշկարանի բաղմոթիւ գլուխներ նվիրված են ստամոքսի, աղիների, լյարդի և փայծաղի հիվանդություններին: Ստամոքսի այն հիվանդութեան ժամանակ, որն բոլոր հեղինակի անվանված է «թուլութիւն», «վատութիւն» առաջանում է ցրտից և ստամոքսի հետ միաժամանակ ախտահարւում է նաև լյարդը: (Հիվանդը դանդաղւում է ախորժակի բացակայութեանից, վատ մարսողութեանից, ցավերից թե՛ էպիգաստրալ շրջանում և թե՛ աջ թուլակողմում: Լյարդի ախտահարման պատճառով հիվանդի մոտ նկատւում է արտահայտված դեղնութիւն): Այս դեպքում առաջարկւում են կոմպլեքս ներգործութեան դեղամիջոցներ, որոնք կարգավորում են թե ստամոքսի, և թե լյարդի խախտված ֆունկցիան. «Մաճուն երկաթի աղտով, որ օգտէ ստամոքաց, որ թուլացել լինի, և վատութիւ և օգտէ սնկան և քամոյ, և երբ մարդն դեղնակտուն չկարէ հալել և ըստամոքն հաց չաղէ, այս զստամոքն աղեկցնէ և բանայ և

օգտէ լերդին, որ ի հովութենէ ցաւի և արաղանին օգտէ և զգոյնն աղեկցնէ: Առ սև հալիւայ և պալիւաճ սրբած ի կտէն, պղպեղ և դարի պղպեղ և զնճալի և սօտ և շհճդարաճ հնդի և սնպու ժ. ժ. տրէմ, սամթի հոնտ և քուռիաթի հոնտ դ. դ. տրէմ և երկաթն աղտոր քացխով դրջած լինի օր մի և գիշեր մի և շորցուցած ճ. տրէմ, զամէնը աղայ և մաղէ և կովուց եղով օծէ և մեղրով շաղվէ և յաման ած զ. ամիս պահէ և տուր բ. բ. տրէմ տաք ջրով և ի ժամոյն» (4, էջ 50ա):

Մանրակրկիտ մշակված է լյարդի հիվանդությամբ տառապող հիվանդների դիետան. խորհուրդ է տրվում ածխաջրատներով հարուստ սնունդ, բուսական յուղեր, բանջարեղեն, դարեջուր և զարեհաց, մեծ քանակությամբ մրգեր, հյութեր և ճարպեղով հագեցված սննդամթերքի սահմանափակում:

Աղիների հիվանդություններից Ասար Սեբաստացին խոսում է տարբեր պատճառներից առաջացած լուծերի կլինիկական պատկերի, նրանց բարդությունների, բուժման և դիետայի մասին: Դրանց մեջ դժվար չէ տարբերակել դիզենտերիա հիվանդությունը, որի կլինիկական պատկերը խիստ տարբերվում է այլ բնույթի լուծերից: Հատկանշական է, որ այս դեպքում Ասարը ելնելով հիվանդության կլինիկական պատկերից, կարողացել է բնորոշել հիվանդության տարբեր շրջանները: Այսպես, ըստ Ասարի, դիզենտերիայի («արյունախառն լուծ») բարդացած դեպքերում աղիքի լորձաթաղանթի վրա առաջանում են տարբեր խորության խոցեր: Հիվանդության հիմնական ախտանիշը Ասարը համարում է արյունախառն լուծը, որը, կախված այն բանից, թե աղիների որ հատվածն է ախտահարված (վերին թե ստորին), լինում է տարբեր բնույթի: Աղիների արտաթորանքի մեջ արյան և հեղուկի հետ միասին աղիի լորձաթաղանթի մանր կտորների առկայությունը խոսում է աղիների վերին հատվածի՝ բարակ աղիի ախտահարման մասին և այդ դեպքում բուժումը հիմնականում պետք է անցկացնել per os ճանապարհով, իսկ եթե արտաթորանքը լինում է արյունային, առանց կղանքային մասսայի, քայքայված, պոկված լորձաթաղանթի մեծ կտորներով, սա նշան է, որ հիվանդագին պրոցեսը ընդգրկում է աղիների ստորին հատվածները՝ հիմնականում հաստ աղին: Նման դեպքում նպատակահարմար է դեղամիջոցները աղիները մտցնել հոգնայի ձևով: Ասարը գրում է. «Բայց զայս գիտացիր, յորժամ արիւնն և շարան խառն իջանէ ընդ աղբն և աղեց սկրդութն՝ փութ ծանր լինի և նօսը, գիտացիր որ ցան ի վեր է և բարակ աղիքն ի հաստ առնէ: Պարտ է ի վերուստ ստածել դեղերով ընդ բերանն, որպէս գրած է: Ապա թէ արիւնն և շարամն առանց աղբի իջանէ և աղեց սկրդութն և փութն մեծ մեծ լինի և թանձր, գիտացիր որ ցան ի վայրն է ի հաստ աղեցն ի աստառն է, որ ելանէ և խոց կենայ: Պարտ

է ի ներքոյ ստածել հովնայով և շաֆերով, սրպէս գրած է. Եւ հարցիր, թէ ծանրութիւն ի յոր տեղն է թէ ցան վերի գիհն է՝ նա խոցն վերն է, և թէ ցան ի ներքի գիհն է՝ նա խոցն ի վարն է» [4, էջ 54 ա]։

Տարբեր լուծերի ժամանակ, բացի ներքին ընդունման զեղամիջոցներէ, Ասարը առաջարկում է օգտագործել արտաքինից տաքացնող միջոցներ. «Տղայի, որ փորն խիստ բշէ՝ առ անխտն և բէմէննի և քարօսի հոնա և յոր վարդ, ծեծէ և քացխով շաղվէ և ձգէ ի վայր փորոյն և օդտէ Աստուծով» [4, էջ 40 բ]։

Աղիւնների մշտն հիվանդութիւններից բժշկարանում հանդիպում ենք թութքային հիվանդութեան, պրոկտիտների, պարապրոկտիտների, վերջնաղիի սեղմիչի (սֆինկտորի) թուլացման էլիմիկական նկարագրին։

Չանդրադառնալով թութքային հիվանդութեան էթիոպաթոգենէզին, Ասար Սերաստացին շատ ընդարձակ ձևով ներկայացնում է այդ հիվանդութեան բուժումը՝ նա բարդ զեղապատրաստուկներ է առաջարկում հիվանդի սուր ցավերը մեղմացնելու, հեմորրոիդալ պտիկիների արյունահոսութիւնը դադարեցնելու համար Բժշկարանի «Մորհամ սնկան» «Պատրոյգ որ օդտէ սնկան, զոր արարին ամիր մամոնի», «թէ մարդու նստոտեղն ժամ ժամ ցաւի», «Մըլհամ որ օդտէ նստոտեղոյն» զլուխնէրում հեղինակը առաջարկում է այս հիվանդութեան բուժման միայն կոնսերվատիվ միջոցներ, անհասկանալի կերպով անտեսելով վիրաբուժական միջամտութիւնը. այն դեպքում, երբ միջնազարի հայ բժիշկները տարբեր թարախային բորբոքումների, պրոկտիտների, պարապրոկտիտների ժամանակ կոնսերվատիվ բուժումից բացի դիմել են նաև ակտիվ վիրաբուժական գործողութիւնների (տեղային անզգայացման պայմաններում կատարելով խորը և լայն կտրվածքներ), որից հետո բուժումը շարունակել են տարբեր մէհամների ու պատրույգների միջոցով։

Բժշկարանում առաջարկվում է նաև մի զեղապատրաստուկ, որն ըստ հեղինակի հրաշալի ներգործութիւնն է ունենում արյունահոսող թութքերի վրա. արյունահոսութիւնը դադարեցնելուց բացի նաև ցավազրկող է, վերացնում է փորկապութիւնը, որը խիստ անցանկանալի է թութքային հիվանդութեան ժամանակ։ Բացի այդ Ասարը խորհուրդ է տալիս զանազան զեղանյութերի պատրաստուկին ավելացնել ձեթեր՝ ցանկալի է «Հոռոմ ձէթ» (ol. Olivarum), նրա մեջ ընկղմել բամբակից պատրաստված պատրույգը և անցկացնել հիվանդի հետանցքը։ Այդ շատ արդյունավետ զեղամիջոցը ուղղում ենք ներկայացնել ամբողջովին. «Առ

* Ի զիպ հայտնի է նաև, որ հարկ եղած զեպրում՝ տեղային և ընդհանուր անզգայացման նպատակով հայ բժիշկները օգտագործել են հատուկ ընարեր զեղամիջոցներ [9, էջ 268]։

յիտակ և անուշ հոտոմ ձէթ և ձիթէն կիսոյն շափի իսպիտակ դեղ արկի ի հաւանն և մանր աղայ և ապա դձէթն լից և աղէկ միատրէ և արայ բամբակէ պատրոյգ որչափ պիտոյ է և թաթխէ ի դեղդ և դիր իրիկոմնն ի նստոյտեղն որ ի քուն լինի և զայս արայ. դ. հ. գիշեր և օգտէ Աստուծով» [4, էջ 58 բ]:

Բժշկարանի մի առանձին գլխում («Վասն ճիճոյ» վերնագրով) Ասարը հայտնում է մի քանի որդամուղ պրեպարատների մասին, որոնք արդյունավետ են թե տափակ (taenia) և թե կլոր (ascaris lumbricoides) որդերի հեռացման համար: Ահա դրանցից մեկը. «Առ զդեղձենու տերևն, քամէ դիր ջուրն, բայց յառաջն կաթ խմեցոյ որ ճիճին ի կաթն յամէ և ի հետ խմցոյ զդեղդ նա հանէ զերկայնն և զբոլոր և գտափակն: Այլ առ թթու նոան կեղևն և. տրէմ և թէ տակին կեղևն լինի, այլ աղէկ է. թէ ուղես եփէ և զջուրն խմցոյ և թէ ուղես աղայ և տուր ի վրա տաք ջուր, խմցոյ և հանէ զամէն ցեղն» [4, էջ 70բ]:

Ընդհանրապես հայերեն միջնադարյան բժշկարաններում շատ ընդարձակ էջեր են հատկացված ճիճվային հիվանդությանը: Միայն Ամիր-գովլաթ Ամասիացու «Անգիտաց անպէտում» որդամուղ պրեպարատների թիվը հասնում է 99-ի: Սա, թերևս բացատրվում է նրանով, որ ճիճվային հիվանդությունը շատ տարածված է եղել միջնադարյան Հայաստանում [10, էջ 72]:

Միզասեռական օրգանների հիվանդություններ

«Գիրք բժշկական արհեստի» բժշկարանում քննարկված միզային ուղիների հիվանդությունները կարելի է բաժանել երկու խմբի՝ միզածորանի և միզապարկի հիվանդություններ և երիկամների տարբեր տեսակի ախտահարումներ: Այս դեպքում էլ յուրաքանչյուր նոզոլոգիական միավորի կլինիկական պատկերը ներկայացված է շատ համառոտ՝ ուղղակի թվարկվում են տվյալ հիվանդությունը բնութագրող գլխավոր ախտանիշները, ի տարբերություն միջնադարյան այլ բազմաթիվ բժշկարանների, որտեղ հանդիպում ենք համորալ պաթոլոգիայի տեսանկյունից շարադրված ընդարձակ դատողությունների այս կամ այն հիվանդության պաթոգենեզի և կլինիկայի վերաբերյալ: Շատ հաճախ Ասարը որևէ ախտահարման ամբողջ կլինիկական նկարագիրը սահմանափակում է վերնագրում: Այսպես՝ բժշկարանի «Դեղ, որ յերբ ջրհեղէ նայ ի նոյն ժամն միզուկն խիստ ցաւի և արիւնի և կսկծէ» գլխի վերնագրին անմիջապես հետևում է ցիստիտով տառապող հիվանդի բուժման միջոցների և դիետայի մասին շարադրանքը: Ինչպես երևում է վերնագրից, ախտորոշման համար հեղինակի կողմից հիմնական

ախտանիշ է դիտվել ցավոտ և արյունային միզարտադրությունը, իսկ բուժման նպատակով առաջարկվել են այնպիսի դեղամիջոցներ, որոնց բաղադրության մեջ մտնում են ցավազրկող, և բուժիչ միջոցներ. «Առ խարբիզակի (սեխ) հունտ կտուած ժ.տրէմ, դգման հունտ, քթիրաշ (խէժ), նշա խաշխաշ, բոպխուս (զարծիլ), և կտուած նուշ ժ.ժ. տրէմ, քարօսի հունտ և. տրէմ, դամէնտ աղաշ և մաղէ և տուր ամէն ալդ գ.տրէմ մանուշակի շարապով» [4, էջ 64ա]:

Յիսախոով հիվանդների համար Ասարի առաջարկած դիետան այսօր էլ կարող է համապատասխանել դիտական բժշկության պահանջներին: Այդ դիետայով արգելված են կծու, թթու և աղի կերակուրները, սահմանափակված է կենդանական ճարպի օգտագործումը, խորհուրդ է տրվում օգտագործել մեծ քանակությամբ բուսական ճարպեր (ցանկալի է նշի ձեթ), ածխաջրատներով հարուստ սնունդ՝ հատկապես մրդեր:

Հայանի է, որ միզային ուղիների հիվանդություններին՝ այդ թվում նաև ցիստիտի էթիոլոգիայում որոշիչ նշանակություն ունի նաև մրսածության գործոնը և պատահական չէ, որ Ասարը գրում է. «... և ի ցրտու պատրաստ պահէ և ի հով բմպելեաց»:

Բժշկարանում որպես առանձին նոդուլոգիական միավորներ են ներկայացված նաև միզապարկի բարային հիվանդությունը և ախմա միզելու երևույթը: Քարային հիվանդության ժամանակ նույնպես զբլխավոր ախտանիշներ են ճանաչվել արյունամիզությունը և ցավոտ միզարտադրությունը: Այս դեպքում Ասարի կողմից բուժումը իրականացվել է միայն կոնսերվատիվ եղանակով, առանց որևէ վիրաբուժական միջամտության: Եթե հիշենք այն հանգամանքը, որ միջնադարյան Հայաստանում վիրաբուժությունը բավականին զարգացած է եղել, և Ասար Սերաստացին ինքն էլ ամենայն հավանականությամբ զբաղվել է վիրաբուժական պրակտիկայով, ապա միզապարկի բարային հիվանդության դեպքում, վիրաբուժական միջամտության վերաբերյալ լռության փաստը պետք է բացատրել թերևս այն պատճառով, որ Ասարը ծանոթ է եղել այնպիսի արդյունավետ դեղամիջոցների, որոնց միջոցով հնարավոր է եղել մանրացնել և մեղի միջոցով հեռացնել միզային ուղիներում գոյացած քարերը: Ծանոթանանք այդպիսի մի դեղամիջոցի, որն ըստ հեղինակի, ունի զարմանալի բուժիչ ազդեցություն. «Առ խիա-րի կուտ և սեխի և դդմի և քեարունաճ և. և. տրէմ, հաճարեհաճուտ ժ. տրէմ, մաճուն արաշ մեղրով և տալն ժաման մի: Այլ քօշի արին չորացած ա. տրէմ գինով խմցոյ, զարմանալի օգտէ» [4, էջ 70բ]: Կամ. «Առ զրողին առանց տերեի ծեծէ ի հաւանն և քամէ զշուրն և

տուր ժ. տրէմ յանօթուց որ խմէ, ի բշտէն և երիկամացն զմեծ և զփոքր քարն փշրէ և հանէ» [4, էջ 38բ]:

Հայ բժիշկներից շատերն են միզային ուղիների հիվանդութիւնների և հատկապես քարային ախտահարման ժամանակ, որպես արդյունավետ բուժամիջոց առաջարկում վարունգի, դժի, սեխի սերմերի խառնուրդից ստացված դեղապատրաստուկը: Մասնավորապես, Ամիր-դովլաթ Ամասիացին «Օգուտ բժշկութեան» երկասիրութիւն մեջ այդ հիվանդութիւն ղեկավարում ի թիվս նմանօրինակ այլ դեղատոմսերի առաջարկում է մի այսպիսի դեղատոմս. «Առ կտուած սեխի հունդ և նանխու և քամու, և կարօսի հունդ և բողկի, և սօտ և լեղի նուշ գ.գ. տրէմ, զամէնն աղա և մաղէ և տուր բողկի ջրով, և տուր սիսուան ջուր, և հոռոմ ձէթ և ապքամայ (մուռի), և ըռազան, և կապարի կեղև կեր, և մուտ ի բաղանիս և աւազան նիստ և քալուկ ձի հեծի, որ թոթվէ, և այս ամէն զքարն երիկամացն հանէ և լաւցնէ»: [11, էջ 382]:

Մենք այն կարծիքին ենք, որ դարեր շարունակ բժշկական պրակտիկայում օգտագործված և քննութիւն բռնած այս դեղամիջոցները լաբորատոր և կլինիկական մանրակրկիտ հետազոտութիւնից հետո, ուրոլոգիայի բնագավառում կարող են գտնել իրենց պրակտիկ կիրառութիւնը:

Ակամա միզելու երևույթը՝ ըստ մեր հեղինակի, կարող է կապված լինել «միզապարկի անուժութիւն» հետ: Ասարի խորհուրդ տված դեղամիջոցը ամրացնում է միզապարկը՝ զգուշտն զօրացնէ և զմեզն յերկար տայ պահէ: Նա տարբերակում է ակամա միզելու այն տարատեսակը, երբ անմիզապահութիւնը լինում է գիշերային (enuresis diurna) «եւ թէ այն ցեղն լինի, որ յանկողինն գողէ առանց իւր կամացն»: Սա նկատվում է հատկապես տղա երեխաների մոտ և, որպես կանոն, անցնում է 14—16 տարեկան հասակում: Այս վիճակը կապված է միզապարկի սեղմիչի (սֆինկտորի) թուլութիւն հետ, որի ծագման պատճառը հիմնականում ռախիտը և սակավարյունութիւնն են: Այս առիթով Ասարը գրում է. «Առ հալիլայ քապիլի և պալիլաճ և ամլաճ ժ.ժ. տրէմ, խոզ կաղին քացխով և աղնծած հ. տրէմ, սօտ և կղմուխ և վարդ և պուստ հ.հ. տրէմ, մուռ գ. տրէմ, աղայ և մեղրով շաղվէ և տուր անօթեաց գ. տրէմ, օգտէ կամուն Աստուծոյ»: [4, էջ 70 ա]: Հետաքրքիր է, որ դեղատոմսի բաղադրութիւն մեջ մտնող կոմպոնենտների մեծ մասը հալիլայի* (myrobalanus) տարբեր տեսակներն են,

* Հալիլա-ար. حليج (լատ. Myrobalanus— «ինքն ի շնդկաց գայ. նման է սև չամիչ»): Իրն-Քելթարը 4 տեսակ է հիշում:

մի բուժամիջոց, որը միջնադարյան բժշկութեան մեջ ունի բաժականին լայն կիրառում (զլխացավի, տենդի, աղե-ստամոքսային տրակտի հիվանդութեանների, ջրգոյտիւթեան, միզային ուղիների և այլ հիվանդութեանների դեպքում):

«Վասն երիկամնացաւի» զլխում Ասարը կանգ է առնում երիկամաբորբի՝ նեֆրիտի կլինիկական պատկերի և բուժման ձևերի վրա: Հիվանդութեան կլինիկան բնութագրւում է հետեւյալ ախտանշաններով. ցավեր գոտկատեղում, բերանից վազ հոտ՝ երբեմն փսխումներ, ախորժակի բացակայութեան, ջերմութեան բարձրացում, զլխացավեր: Հասկանալի է, որ XVII դ. բժշկի համար կլինիկական բժշկութեան ախտորոշիչ արդի միջոցների՝ մասնավորապէս մեզի կլինիկական բնութեան ժամանակակից մեթոդների, բացակայութեան պայմաններում, պետք է դժվար լինէր միզային ուղիների, հատկապէս երիկամային հիվանդութեանների ախտորոշումը: Այսուհանդերձ, Ասարը մեզի միայն տեսանելի փոփոխութեանների և անամնեստիկ տվյալների խելացի վերլուծութեան ճանապարհով կարողացել է հիմնականում ճիշտ ախտորոշել այդ օրգաններում կատարվող ախտաբանական շեղումները:

Ընդհանրապէս թե՛ անտիկ, և թե՛ միջնադարյան բժշկութեան մեջ կարեւոր նշանակութեան է տրվել մեզի դուլնի, հոտի, կոնսիստենցիայի ամենաշնչին փոփոխութեաններին՝ որպէս ախտորոշիչ լավագոյն միջոցի: Միջնադարի խոշոր կլինիցիստ Իբն-Սինան գտնում էր, որ հիվանդութեան ամեն մի շրջան տալիս է մեզի յուրօրինակ փոփոխութեան, և ելնելով դրանից կարելի է որոշել, թե ո՞ր ստադիայում է գտնվում տվյալ ախտահարումը [13, էջ 113—114]: Ավելին, ելնելով մեզի բնութիւնից, Հիպոկրատը, Գալենը, Իբն Սինան տարբերել են մարդու բնութեան 4 հիմնական տիպեր, որոնցից յուրաքանչյուրին համապատասխանում է մեզի յուրահատուկ ձև [14, էջ 530]:

Ասար Սեբաստացին կարողացել է բնարել ճիշտ բուժում ու դիետա երիկամային հիվանդների համար: Նրա առաջարկած բարդ դեղապատրաստուկները կարգավորում են օրգանիզմի ջրա-աղային փոխանակութեանը և անոթային ֆունկցիան, հանգստացնում են ներվային սխտեմը, ունեն հակաբորբոքիչ և կազդուրիչ ներգործութեան (գործոններ, որոնք շափազանց կարեւոր են երիկամային հիվանդութեանների ժամանակ): Այս դեպքում, որպէս ցավազրկող միջոց օգտագործվել է խաշխաշը (Papaver), որից այսօր էլ պատրաստում են բժշկութեան մեջ լայն կիրառում գտած Opium-ը: Ասարը երիկամային հիվանդութեանների ժամանակ ազդեցիկ բուժամիջոց է համարում հայկական կավը և հայկական բորակը: Դեղամիջոցներ, որոնք լայն ճանաչում ու

կիրառություն ունենին ինչպես անտիկ, այնպես էլ միջնադարյան բժշկության մեջ¹:

Բժշկարանում որպես երիկամային ախտահարում է դիտվում շաքարախտ հիվանդությունը: Մանոթ լինելով շաքարախտի էթիոպաթոգենիզի և բուժման վերաբերյալ մեծանուն բժիշկների կարծիքներին Ասարը շարադրում է իր սեփական դատողությունները. «Եւ ցաւ մի ալ կայ, որ երիկամունքն լինի և իր անունն դիահիտոս ասեն, որ թարթմանի անցտրիկ, վասն զի յորժամ խմէ զջուրն, նայ ի նոյն ժամն ի վայր անցանի: Եւ ի նշանն այն է, որ ջերմութիւն շատանայ և մարդն բարկանայ, և ծարաւի հանապազ և այս ցաւս երիկամացն ի ջերմութենէ լինի:

Եւ յերբ այս ցաւս մարդոյն դիպի, պարտէ, որ զինքն ծարաւ պահես, ոչ ջուր տաս կուշտ և ոչ հաց: Եւ իր կեշակուրն սամիթ տուր և գարէ կորկոտ և գարէ հաց և գարէ ջուր և խիարի հունտ և շանկիարի: Եւ ջրի փոխարէն դոմի ջուր խմելու և թթու նուան ջուր տուր և սերկեւի ջուր ըմպելի և խորժլի և ժուի և դեղն զայս արայ: Առ պղրդատունի բ. տրէմ խիարի ջրով ի թուրջ արկ և խմել տուր յանօթեց: Եւ ապա տուր զայս դեղս զի խիստ օգտէ: Առ աղաղիայ բ. տրէմ, շոր կարմիր վարդ գ. տրէմ նուան ծաղիկ, սամիթ ա. տրէմ, քթիրայ կէս տրեմ, աղայ և մաղէ և պղրդատունի լովապով շաղէ, ջուրս արայ և շքի շորացոյ և տուր յամէն օր անոթից բ. տրէմ աղցած և հետեւ հով ջուր և զիր կերակուրն հովաբնութիւնք տուր» [4, էջ 57ա]:

¹ Հայկական բորակը հին ժամանակներում հիմնականում հանում էին վանա ծովից, այն հարուստ էր առավելապես նատրիումի քիկաբրոնատով, նրա բաղադրության մեջ մտնում են նաև նատրիումի սուլֆատ և քլորիդ: Հայկական կավը շատ տարածված դեղամիջոց է եղել Հայաստանում. այն օգտագործվել է թե ներքին ընդունման ձևով, մրսնելով տարբեր դեղապատրաստուկների բաղադրության մեջ, և թե արտաքին օգտագործման համար՝ քսուկների ձևով: Հայկական կավը դեռ շատ վաղուց թափանցել է հունական բժշկության մեջ. նրա հրաշլի բուժիչ հատկությունների մասին գրել են Թևոֆրաստեսը (IV դ. մ.թ.ա.), Գալենը (II դ. մ.թ.), քիչ ավելի ուշ Հայեցին, Թրալացին, էգինացին: Հետաքրքիր է, որ այժմ էլ ոչ միայն հայկական ժողովրդական բժշկության, այլև եվրոպական և արաբական դեղարուժության մեջ հայկական կավը օգտագործվում է թե արտաքին, և թե ներքին մի շարք ախտահարումների բուժման համար [15, էջ 157]: Այս դեղամիջոցների բուժիչ ազդեցությունը շատ բարձր է գնահատել իրն Սինան, հատկապես միզային ուղիների ախտահարումների (երիկամների թուլություն, երիկամի խոց, քարային հիվանդություն, անկամ միզարտադրություն) ժամանակ: Իր հանրահայտ «Կանոնի» 3-րդ գրքում, որը նվիրված է ներքին ախտաբանությանը և թերապիային, զանազան դեղատոմսերի բաղադրության մեջ հաճախ ենք հանդիպում հայկական կավի ու բորակի օգտագործմանը: Իսկ քարային հիվանդության ժամանակ որպես բուժամիջոց նա հիմնականում առաջարկում է հայկական բորակը, բողկի քամուրսի հետ միասին [16, էջ 295]: Ի դեպ, հետաքրքիր է, որ Ասար Սերաստացին նույնպես քարային հիվանդության ժամանակ լավագույն միջոց է համարում բողկի քամուրսը:

Շաքարախտը հայտնի է եղել դեռևս հին հույներին և դիտվել է որպես երիկամային ախտահարում: Դարեր շարունակ գոյատևելով և անառարկելի տեսակետ լինելով միջնադարյան բժշկիների համար վերոհիշյալ կարծիքը բժշկագիտության մեջ պահպանվել է ընդհուպ մինչև XIX դ. վերջերը, երբ գիտնականներին հաջողվեց ցույց տալ ենթաստամոքսային գեղձի դերը շաքարախտի պաթոգենեզում:

Ինչ վերաբերում է շաքարախտի կլինիկական նկարագրին, ապա այն զարմանալի ճշգրտությամբ տրված է միջնադարի հայ անվանի բժիշկների գործերում: Մասնավորապես, բժշկադեղատ Գրիգորիսը «Քննութիւն բնութեան մարդոյ և նորից ցաւոց» շատ արժեքավոր աշխատության «Վասն երիկամացն նկդերոյն պատճառացն և նշանացն» գլխում գրում է. «Եւ նեղ որ անուանի դիապետս և պրկարի է, որ է հայերէն կոկ գոզ, զոր չկարէ մարդ արգիլել. և իւր բնծայիւն այն է, որ քարշողական դօրութիւնն, որ ի յերիկամունքն են՝ ուժով են, և սովիմբ քարշէ երիկամն զգիճութիւնն ի յարենէն. և այն գիշութիւնն է գոզն, որ ի յարինէն բաժանի և յերիկամուն ւնի...: Եւ նշանն այս են այս նեղոյս. յովով ծարաւ առանց ջերման, և լլցամաքէ մարմինն, և գոզն ևլնէ, և վար ի ջրփողն, և գոզն սպիտակ լինի դերզ դշուր» [17, էջ 160]:

Մեր կարծիքով դիարեթը երիկամների ախտահարման արդյունք է ընկալվել հավանաբար այն պատճառով, որ հիվանդի մոտ սկզբնական գլխավոր ախտանիշ է եղել միզարձակության յուրօրինակ փոփոխությունը՝ առատ և անզույն միզարտադրությունը: Գուցե և հենց այս պարագան Ասար Սերաստացուն առիթ է տվել հիվանդությունն այնքան բնորոշ ձևով կոչելու «անցւորիկ» կամ «անցաւորիկ» («Վասն զի յորժամ խմէ դշուրն, նայ ի նոյն ժամն ի վար անցանիք»): Ի դեպ դիարեթի հայերեն այս շատ հետաքրքիր անվանումը գտնում ենք միայն Ասար Սերաստացու մոտ: Ամենայն հավանականությամբ Ասարը լավ տիրապետել է հունարենին և դիարեթ (diabetes) տերմինը, որը ծագել է հունարեն *διατης*, բառից՝ նշանակում է անցնել, կտրել, անցնել ինչ որ բնի միջով (շատ ճիշտ թարգմանել է «անցաւորիկ»): «Եւ ցաւ մի այլ կայ, որ երիկամունքն լինի և իր անունն դիահիտոս ասեն, որ թարգմանի անցաւորիկ»):

Միջնադարում շաքարախտով հիվանդների բուժումը հիմնականում եղել է ճիշտ կազմակերպված դիետան: Զպետք է մոռանալ, որ բժշկագիտության մեջ մինչև ինսուլինային թերապիայի մուտք գործելը այս հիվանդության բուժման դիետիկ միջոցը իրոք հիմնականն ու միակը կարող էր լինել: Այդ առումով չափազանց արժեքավոր է, որ նման հիվանդների համար Ասարի կողմից առաջարկվող դիետան լրիվ համապատասխանում է ներկա գիտական բժշկության պահանջներին: Այս

դիտարկելով սահմանափակված են հացը (խորհուրդ է տրվում միայն գարեհաց) և հեղուկները, առաջարկվում է ածխաջրատներով աղքատ սնունդ՝ բանջարեղեն, հատկապես վարունգ, դդում, սամիթ նուան և սերկեկիի հյութեր: Որպես դեղամիջոց առաջարկվում է. «առ աղաղիայ բ. տրէմ, չոր կարմիր վարդ գ.տրէմ, նուան ծաղիկ, սամիթ ա. տրէմ, քթիրայ, գաղի խէժ կես տրէմ, աղայ և մաղէ և պղրդատունի (լվախոտ), լօվապով շաղէ, դուրս արայ և ի շքի շորացոյ և տուր յամէն օր անօթից բ. տրէմ աղցած» [4, էջ 57ա]:

«Գիրք բժշկական արհեստի» գործի ավելի քան 10 գլուխներում Ասարը անդրադարձել է սեռական օրգանների հիվանդություններին՝ մասնավորապես սեռական անկարողությանը (իմպոտենցիային): Հեղինակի բազմակի անդրադառնալը այդ հիվանդությանը ամենայն հավանականությամբ կարելի է բացատրել դրա տարածված լինելու հանգամանքով, որպես XVI—XVII դդ. Հայաստանի սոցիալ-տնտեսական պայմանների անուրախ ժառանգություն:

Ասարը տարբերակում է իմպոտենցիայի երկու տեսակ. 1. երբ սեռական ակտը բոլորովին բացակայում է և 2. երբ այն թույլ է արտահայտված, ինչպես նաև սեռական ֆունկցիայի երկու ձևի խանգարում. 1. անկարողություն հղիացնելու (Impotentia generandi) և 2. անկարողություն սեռական ակտի (Impotentia coeundi):

Ասար Սեբաստացին կարողացել է ախտորոշել իմպոտենցիայի այն տեսակը, որը կապված է անմիջականորեն սեռական օրգանների հիվանդությունների հետ*:

Ասարը խորհուրդ է տալիս սեռական անկարողությունը բուժել այնպիսի դեղապատրաստուքներով, որոնց բաղադրության մեջ միաժամանակ մտնում են թե բուսական, և թե կենդանական ծագման պրեպարատներ: Ահա դրանցից մեկը. «Եւ այս դեղս է, որ ի յարկան զօրութիւն յաւելցնէ և ինքս ամրացնէ գործովն և փորձովն: Առ վայրի ստեպղինի (գաղար) հունտ, և ծննփիկի և բողկի և սեխի դարապղպեղ ե.ե. տրէմ, խուսաթի սալապ ե. տրէմ, լոզիանի (կղմուխ) հունտ և առվուտի և շողգամայի հունտ գ. զ. տրէմ, տարչինի գ. տրէմ կես, սախանդուր ձկան (աֆրիկական փոքրիկ մողես) պորտ Ժ. տրէմ, քուն-

* Ասարի համար դժվար էր ընկալել այդ հիվանդության բուն էթիոպաթոգեննը, քանի որ միայն XX դարի սկզբներին, կապված էնդոկրինոլոգիայի և բարձրագույն ներվային համակարգի ֆիզիոլոգիայի զարգացման հետ, հնարավոր եղավ տալ այս ծանր ախտահարման տարբեր հարցերի խորը դիտական մեկնաբանումները և համապատասխանորեն տարբերակել նրա մի քանի ձևերը՝ ուղեղային, ողնուղեղային, հորմոնալ, ինչպես նաև կապված սեռական օրգանների հիվանդությունների և մեխանիկական ազդակների հետ [18, 19]:

չութ կտուած ժե. արէմ. աղայ և մաղէ դամէնտ և կովուց եղուլ մներն-
շէ և ապայ մեղորով մաճուն արայ և տուր որպէս ըռատմն է և դիր չա-
ման և տուր ի ժմուն պ. արէմ և ի վրա ասորեկի շուր տուր» [4, էջ
41ա]։ Ինչպէս տեսնում ենք, այս զեղատոմսի բաղադրութեան մեջ մըտ-
նում են 11 զեղարույսեր և 1 կենդանական ծագման պրեպարատ՝ սա-
խանդուր մողեսի պորտը շարացրած և ձեծված վիճակում)։ Մի ուրիշ
զեղատոմսում զեղարույսերի հետ զուգակցված են ազվեսի ամորձի-
ները*։ Նկատելի է, որ համարյա բոլոր այն զեղատոմսերը, որոնք խոր-
հուրդ են տրվում հեղինակի կողմից իմպոտենցիայի ժամանակ, իրենց
մեջ պարունակում են ստեպլինի (գազարի) սերմեր։ Նման զեպքերում
ստեպլինի բուժիչ ներդրածութեան մասին գրել է նաև Ամիրզովլաթ
Ամասիացին. «... և զմերձատրութիւնն շարժէ. և զմերձատրութիւնն
յաւելցնէ» [20, էջ 324]։

Բժշկարանում Ասար Սերաստացին շատ թուցիկ է անդրադառնում
մանկաբարձագինեկոլոգիական հիվանդութիւններին։ Սա անպայման
ունի իր բացատրութիւնը. շիրտակալով գինեկոլոգիական պրակտիկա
(XVI—XVII դդ. մանկաբարձութեամբ և գինեկոլոգիայով զբաղվում էին
միայն հեթմոններն ու տատմեհները) Ասարը, ինչպէս ճշմարիտ կեր-
պով նկատել է Գ. Հարութիւնյանը, հազիվ թէ կարողանար որեւէ նո-
րամտածութիւն բերել գինեկոլոգիայի կամ մանկաբարձութեան բնա-
զավառում [21, էջ 239]։

Ամբողջ բժշկարանում Ասարը բնդամենը մեկ զլուխ է նվիրել գի-
նեկոլոգիական հիվանդութիւններին՝ «Կնիկ, որ անբաւ սպիտակ ջուր
տեսնու և թէ այն ջուրն ի յինքն հասնի նա խոց անէ» հատվածը։ Հավա-
նական է խոսքը գոնորեայի կամ սիֆիլիսի մասին է, որովհետև հեղի-

* Տարբեր կենդանիների որոշ օրգանների օգտագործումը բուժման նպատակով՝
օրգանոթերապիան ծնունդ է առել խոր անցյալում։ Այդ մասին հիշատակումներ կան
դեռևս եղիպտական հայտնի էրերսի պապիրուսում։ Հասկանալի է, միջնադարում օր-
գանոթերապիան շուրջ գիտական հիմնավորված մեկնաբանում, այնուամենայնիվ միջ-
նադարյան բժիշկները զուտ էմպիրիկ միջոցով կարողացան նկատել տարբեր կենդանի-
ների ինչ-ինչ օրգանների, հատկապէս սեռական զեղձերի, բուժիչ ազդեցութիւնը մի
շարք հիվանդութիւնների ժամանակ և ըստ այդմ որեւէ օրգանի այստա՞հարումը բուժել
այդ նույն օրգանի միջոցով, փայծաղը՝ փայծաղով, ստամոքսը՝ ստամոքսով, միզապար-
կի հիվանդութիւնները՝ միզապարկով և այլն։ Բժշկագիտութեան մեջ բուժման այս սկզբ-
քունքը Պարացելսի կողմից ձևակերպվեց այսպէս՝ «բուժել նմանը՝ նմանով»։ Ի տար-
բերութիւն միջնադարյան օրգանոթերապիայի, ժամանակակից օրգանոթերապիայում
բուժման նպատակով օգտագործվում են ոչ թէ ամբողջ օրգանը, այլ նրանից ստացված՝
կենսաբանորեն ակտիվ, մաքրված էքստրակտները (օրինակ՝ ամբողջ ենթաստամոքսա-
յին զեղձի ընդունման փոխարեն օգտագործվում է նրանից ստացված ինսուլինը, լիպո-
կախիը, պանկրեատինը կամ ամբողջ արյունը ընդունելու փոխարեն ամեն մի առանձին
հիվանդութեան զեպքում նրա տարբեր բաղադրիչ մասերը)։

նակը գրում է այդ ախտահարման վարակիչ լինելու փաստի մասին. «և թէ յերիկն հասնի նա նոյնպէս և զայրիկն խոց անէ և ի զաւակաց կտրէ...» [4, էջ 58ա]: Ամբողջ բժշկարանում մանկաբարձագինեկոլոգիական հիվանդութիւնների վերաբերյալ ոչ մի այլ տեղեկութիւն այլևս չենք հանդիպում:

«Գիրք բժշկական արհեստի» բժշկարանում մեծ ուշադրութեան է արժանի նաև աչքի հիվանդութիւններին նվիրված բաժինը: Հեղինակի կողմից հանգամանորեն քննարկված են տեսողական օրգանի տարբեր ախտահարումները: Մանոթանալով դրանց կլինիկական նկարագրին, դժվար չէ ախտորոշել կոպերի բորբոքում (conjunctivitis), թարթիչների թափում (madarosis), եղջերաթաղանթի և արցունքազեղծի ու արցունքային խողովակի տարբեր հիվանդութիւնները: Որպես առանձին նոգոլոգիական միավոր է ներկայացված ոսպնյակի ախտահարումը (cataracta):

Հայերեն միջնադարյան բժշկարաններում հաճախ ենք հանդիպում տեսողական օրգանի հիվանդութիւնների նկարագրութիւններին: Այս դեպքում սա կարող է պատճառաբանվել միջնադարյան Հայաստանում այդ հիվանդութիւնների մեծ տարածվածութեամբ:

Նկատելի է, որ ինչպես Ամիրդովլաթը, այնպես էլ Ասար Սեբաստացին հիմնականում խոսում են աչքի արտաքին հատվածների ախտաբանական փոփոխութիւնների մասին: Եղջերաթաղանթի բորբոքման ժամանակ խորհուրդ է տրվում հետևյալ բուժումը. «Յորժամ աչքն ցաւի մարդուն և ի ներս արիւն շատ կենայ: Առ անծրութ և լից ի վրայ իշոյ կաթն որ թրջի և շորացուր և առ յիրմէն ի. տրէմ, նիշայ և շաքար ի. ի. տրէմ, աղայ ընդ յիրար և երբ աչաց ցաւութեան ընդ շորս օր անցանի, ձգէ յաչքն ի դեղէն՝ օգտէ նոր աչացաւութենէն և խոցին, որ ի յաչքն կենայ և բերէ զմիսն և սրբէ զկարմրութիւն և հանէ զթաժաց կտրածին զարիւնն եթէ ի պտուղ և կենայ, և թէ այլ տեղ» [4, էջ 47ա]:

«Վասն, որ ի յաչքն սև ջուր իջնա և զերդ ճանճեր և զերդ մնճղեխնի երևնայ յառջնն ի աչացն» հատվածում Ասարը նկարագրում է աչքի մի այսպիսի ծանր հիվանդութիւն, որն սպառնում է կուրութիւն: Խոսքը հավանաբար գլաուկոմա հիվանդութեան մասին է: Ասարը, հետևելով Ամիրդովլաթին, խորհուրդ է տալիս աչքի մեջ կաթեցնել շորքոտանիների և թուղմների լեղիից պատրաստված «շաֆեր»:

Բացի տեսողական օրգանի հիվանդութիւնից Ասար Սեբաստացին հետաքրքիր դատողութիւններ է անում այն մասին, թե ինչպիսի աղդեցութիւն են ունենում տարբեր գույները տեսողական օրգանի վրա: Մանոթանալ բժշկարանի «Վասն եթէ, որ գոյնն է աչացն օգուտ կամ որ է վնասակար» վերնագիրը կրող հատվածին: «Սպիտակն վնասակար

է, զի սփռել և ամբողջէ դաւանութիւն և զրիբան տկարացուցանել որպէս ձիւնն, իսկ կանանչ յաւէտ օգտակար է զի հաւաքէ դաւանութիւն և զրիբան զօրացուցանել: Սկն զործակից է առ տեսարանն գիշերու մասին նմանիլ, և զի ժողով պահէ ծիրանին՝ օգտակար է և անործական որպէս զկանանչն: Կարմիրն անործելի է պակաս քան զխալիտակն, բայց զրիբան տկարացուցանել: Դեղինն քան զկարմիրն պակաս վնասէ: Եւ տկար աշաց օգտակար է ի յար պնոզն ընդ կանանչ վաշր» [4, էջ 48բ]:

Սրանք են հիմնականում այն առանձին հիվանդագիրն միավորները, որոնց անդրադարձել է Ասար Սեբաստացին իր բժշկարանում: Մի վերապահությամբ, բժշկարանը բացի վերը նշվածից իր մեջ պարունակում է հեղինակի՝ բժշկության ամենատարբեր հարցերին ու քննադատումներին (հիգիենա, դիետա և այլն) վերաբերող արժեքավոր դատողություններ, որոնք առանձին հետազոտության նյութ են:*

Ամբողջացնելով մեր ասելիքը «Դիրք բժշկական արհեստի» բժշկարանի և նրա հեղինակի մասին, նշենք, որ Ասար Սեբաստացու բժշկագիտական անուրանալի վաստակը, միջնադարյան հայ բժշկագիտությանը բերած նրա ավանդը առիթ են տալիս նրա մասին խոսելու՝ որպէս մեծ բժշկապետներ Մխիթար Հերացու և Ամիրդովլաթ Ամասիացու բժշկական ավանդույթների ժառանգորդի ու արժանավոր շարունակողի:

Д. М. КАРАПЕТЯН

ВРАЧ АСАР СЕБАСТАЦИ

Резюме

Богатое научное наследие армянского врача XVII в. Асара Себастаци и поныне недостаточно изучено. В статье проанализирован труд Асара Себастаци «Книга о врачебном искусстве». Предметом исследования послужили четыре рукописных списка лечебника, находящиеся в Матенадаране им. Маштона (рук. №№ 413, 9837, 7749, 715), а также различные сведения, касающиеся указанного труда Асара Себастаци, имеющиеся в каталогах рукописей ряда заграничных библиотек и рукописных хранилищ. На основании всех указанных данных представлено полное описание лечебника.

«Книга о врачебном искусстве» подразделяется на два раздела: а) Глава, трактующая о причинах болезней и б) собственно «Книга о врачебном искусстве». Последняя состоит из 143

* Մասնավորապես չափազանց ուշադրով է բժշկարանի ղեկորայինների կշռալին միավորների վերաբերյալ «Վասն կշռոց և լարերու և դրամեր և զկուտն և զնուկին և զմշրխալին» գլուխը:

глав, в которых рассматриваются различные вопросы патологии внутренних болезней и их лекарственного лечения.

ԿՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- 1 Հանդէս ամսորայ, Վիեննա, 1914:
2. Conybeare, A catalogue of the Armenian Manuscript in the British Museum, London, 1913.
- 3 Կառապետյան Դ. Մ. Նոր պատահիկ Մխիթար Հերացու անհայտ աշխատությունից: Էքսպերիմենտալ և կլինիկական բժշկության հանդես, Երևան, 1976, № 6:
- 4 Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. № 7749 (այսուհետև Մատենադարան):
- 5 Մատենադարան, ձեռ. № 464:
- 6 Մխիթարայ բժշկագետի Հերացույ Ջերմանց մխիթարութիւն, Վենետիկ, 1832:
- 7 Ковнер С. Г. История средневековой медицины, вып. II, Киев, 1893.
- 8 Տաշեան Հ. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895:
- 9 Կծայան Ա. Ս. Բժշկագիտությունը Հայաստանում XI—XIV դարերում, Երևան, 1968:
- 10 Оганесян Л. А. История медицины в Армении, ч. III., Ереван, 1946.
- 11 Ամիրգովյար Ամասիացի, Օգոստ բժշկության, խմբ. Ստ. Մալխասեանցի, Երևան, 1940:
- 12 Ալիշան, Հայ բուսակ, Վենետիկ, 1895:
- 13 Абу Али Ибн Сина, Канон врачебной науки, кн. I, изд. II, Ташкент, 1981.
- 14 Петров Б. Д. Ибн Сина-клиницист. Канон врачебной науки, кн. III, Ташкент, 1959.
- 15 Оганесян Л. А. История медицины в Армении, ч. I, Ереван, 1946..
- 16 Абу Али Ибн Сина, Канон врачебной науки,—кн. III, том II, изд. II, Ташкент, 1980.
- 17 Գրիգորիս, Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց, աշխատ. Ա. Ս. Կծոյանի, Երևան, 1962:
- 18 Якобзон Л. Половое расстройство у мужчин. Москва, 1957.
- 19 Порудоминский И. Половое расстройство у мужчин, Москва, 1957.
- 20 Ամիրգովյար Ամասիացի, Անգիտաց անպէտ, Վիեննա, 1926:
- 21 Арутюнян Г. Г. Гинекология и акушерство в Армении в древние и средние века, Ереван, 1974.